ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՊԱԶԱՐՋԻԿԻ «ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ» ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ

2011 թ. դեկտեմբերի 18-ին՝ կիրակի օրը, Պազարջիկում տեղի ունեցավ «Սուրբ Ստեփանոս» եկեղեցու բացման արարողությունը եւ մատաղի օրհնություն: Հոգեւոր մեծ աշխուժություն եւ ցնծություն էր տիրում քաղաքում: Բուլղարիայի տարբեր դարաձաշրջաններից ժամանել էին բազմաթիվ ուխտավորներ՝ մասնակցելու Եկեղեցու բացման արարողակարգին: Ներկա էին Բուլղարիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արսեն Սհոյանը, դեսպանատան դիվանագետ Աննա Սահակյանը, Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ պր. Ռուբեն Գրիգորյանը, հայ ազգային միությունների եւ կազմակերպությունների վարչական ներկայացուցիչներ եւ անդամներ, հոգեւոր այրեր եւ հավատավոր զավակներ, ինչպես նաեւ Պազարջիկի քաղաքային իշխանավորներ: Պատարագիչն էր Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Արգար վարդապետ Հովակիմյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը «Սուրբ Ստեփանոս» եկեղեցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերված օծված վեմ քարի վրա մատուցեց Սուրբ եւ անմահ Պատարագ: Իր քարոզի մեջ առաջնորդական տեղապահն անդրադարձավ հայ ազգային եւ հոգեւոր կյանքում եկեղեցու դերին եւ նշանակությանը, ինչպես նաեւ ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի սերն ու օրհնությունը:

Պատարագից հետո կատարվեց մատաղի օրհնության կարգ: Սրբազան արարողությունից հետո տեղի ունեցավ եկեղեցու բարերար Նշան Պզտիկյանի ընտանիքի կողմից կազմակերպված պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Տիար Դեսպան Արսեն Սհոյանի եւ առաջնորդական տեղապահ Տ. Արգար վրդ. Հովակիմյանի:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

2011 թ. դեկտեմբերի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Հայրենասեր ու ազգանվեր, ինչպես նաեւ գիտական, գրական ու հրապարակախոսական գործունեության համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» պատվո

Ս. Դպրոցական եկեղեցում Ս. Գևորգյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վիկտորիայի Ս. Գրիգորյան

բարձր շքանշաններ հանձնվեցին մշակույթի երեք գործիչների՝ Մեսրոպ Պողոսյանին, Արամայիս Սահակյանին եւ Ռազմիկ Դավոյանին:

Արարողության սկզբում գրականության վաստակաշատ մշակների ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունեց Տ. Սիփան արեղա Գեւորգյանը: Այնուհետեւ նվիրյալների կյանքին ու գործունեությանն անդրադարձան փիարք Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Ազատ Գասպարյանը եւ գրականագետ Դավիթ Գասպարյանը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը եւ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը:

Բանաստեղծուհի Մեսրոպ Պողոսյանին ուղղված կոնդակում մասնավորապես նշվում էր. «Բանաստեղծություն, պոեմ, հուշագրություն թե հրապարակախոսություն՝ Ձեր խոսքը հնչում է մարդու հանդեպ մտահոգությամբ, Հայրենիքի սիրով ու գովքով, բարու եւ ճշմարտի ձգտումով: Գովելի է, որ Դուք ստեղծագործություններ եք գրել նաեւ մանուկների համար, որը վկայում է աճող սերնդի հանդեպ Ձեր հոգածու նախանձախնդրության մասին: Ձեր գրական շնորհի եւ ճաշակի մասին են վկայում նաեւ Ձեր թարգմանությունները, որոնցով եւս ծանոթ եք հայ ընթերցողին: Այսօր Դուք անկեղծ նվիրումով ու նախանձախնդրությամբ շարունակում եք գրական Ձեր առաքելությունը... Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Ամենախնամ Աստված Իր օրհնության մեջ պահպանի Ձեզ եւ պարգեւի քաջառողջ արեւշատություն եւ գործոց մշտանորոգ հաջողություններ»:

Արամայիս Սահակյանին ուղղված կոնդակում ասվում էր. «Հայ գրականության ծաղկուն անդաստանի մեջ վաստակաշատ մշակ եք Դուք, սիրելի պրն. Սահակյան: Ձեր արձակ ու չափածո ստեղծագործությունները, երգեր դարձած հարյուրավոր բանաստեղծությունները, հրապարակախոսական հոդվածները քաջածանոթ եւ հոգեհարազատ են մեր ժողովրդին, Ձեր ստեղծագործական վաստակը արժանիորեն գնահատված է բազմաթիվ պարգեւներով ու մրցանակներով... Աղոթում ենք, որ Բարձրյալ Տերը մեր մեծ ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխոսությամբ Իր շնորհն ու օրհնությունն անպակաս դարձնի Ձեր կյանքից եւ պարգեւի Ձեզ քաջառողջ, արեւշատ երկար օրեր, նոր եռանդ ու ներշնչանքներ»:

Ռազմիկ Դավոյանին ուղղված կոնդակում նշվում էր. «Ձեր գրական ձիրքն ու տաղանդը երկար տարիներ արգասավորությամբ ծառայեցնում եք հայ գրականությանը եւ այսօր Ձեր հոբելյանը դիմավորում եք ճանաչված ու գնահատված լինելով գրականասեր հասարակության կողմից: Ձեր պոեզիան, առանձնանալով մարդկային հոգու խորին ապրումներով, հայրենասիրական ոգով, խորհրդածության է մղում ընթերցողներին, զորացնում նրանց ազգասիրությունը, հորդորում ապրել ու գործել՝ հանուն ճշմարտության, արդարության եւ խաղաղության... Աղոթում ենք, որ Բարձրյալի օրհնությունն իր ամենառատ պարգեւներով միշտ Ձեզ հետ լինի, անպակաս Ձեր կյանքից»:

Կոնդակների ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը մշակույթի գործիչներին

հանձնեց Հայ Եկեղեցու պատվո բարձր շքանշանները՝ ի գնահատություն նրանց բազմամյա վաստակի:

Այնուհետեւ իրենց սրտի խոսքն ասացին մեծարյալները՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ մշակույթի գործիչների նկատմամբ Մայր Աթոռի կողմից մշտապես դրսեւորվող ուշադրության համար: Բանաստեղծների դիտարկմամբ յուրաքանչյուր հայ արվեստագետի համար ամենայն հայոց հոգեւոր կենտրոնի պարգեւը մեծագույն գնահատանքն է իրենց ծառայության եւ վաստակի:

Վերջում ամենքին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով վաստակաշատ գրողների եւ հյուրերի ներկայությունը Մայր Աթոռում՝ Վեհափառ Հայրապետն իր եւ միաբանության անունից շնորհավորական խոսք ուղղեց մեծարյալներին: Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. «Դուք ձեր գրական ստեղծագործությամբ ու վաստակով փառավոր առաքելություն եք իրականացրել մեր ժողովրդի կյանքում եւ ձեր ստեղծագործություններով կրթել եք սերունդներ, որովհետեւ ձեր ստեղծագործությունները մարդուն ուսուցանում են գեղեցիկն ու ճշմարիտը, արդարն ու արժանին, նաեւ կերտում են հայրենասիրություն, ազգասիրություն, նվիրական մեր բոլոր արժեքները: Մենք շնորհակալ ենք, որ դուք շարունակել եք մեր հայրերի գեղեցիկ ավանդը եւ ապրվածատուր ձեր շնորհներով զորացրել ոգին ու պայծառացրել միտքը հայության մեջ»:

Խոսքի վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերը բեղմնավոր դարձնի նրանց գրիչը եւ պարգեւի նորանոր ներշնչանքներ, որպեսզի արդյունավոր դարձնեն իրենց կյանքի անդաստանը նոր ստեղծագործություններով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԽԱԼՑԻԽԵԻ ՓՈՔՐ ՊԱՄԱՃ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ

2011 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բարգեն աբեղա Սալբիյանի, Թբիլիսիի Առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Հակոբ աբեղա Սահակյանի եւ Ախալցիխեի շրջանի հայկական գյուղերի հոգեւոր հովիվ Տեր Մովսես քահանա Մանուկյանի, վերաօծվեց Ախալցիխեի շրջանի Փոքր Պամաճ գյուղի ԺԹ. դարի սկզբին կառուցված Սուրբ Խաչ եկեղեցին:

Փոքր Պամաճ գյուղը հիմնադրվել է 1829 թվականին, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու առաջնորդությամբ, Արեւմտյան Հայաստանի Թորգոմ գավառից եւ Կարինի գավառի Գառն գյուղից վերաբնակեցված հայորդիների կողմից:

1881 թվականին գյուղում բացվել է ծխական դպրոց, որը գործել է մինչև 1932 թվականը, որից հետո այն դարձել է պետական տարրական կրթօջախ:

Եկեղեցին իր գործունեության տարիներին իր շուրջն է համախմբել ժողովրդին, եւ հոգեւոր սպասավորների միջոցով հոգացել տեղի բնակչության ուսումնառության եւ հոգեւոր կրթության մասին: Սակայն խորհրդային տարիներին եկեղեցին փակվել է եւ վերածվել պահեստի:

1993 թվականին, տեղի բնակիչ Հովհաննես Մանուկյանի նախաձեռնությամբ, եկեղեցին նորոգվել է եւ 1995 թվականից սկսել է գործել: Սակայն տարիների ընթացքում եկեղեցին հիմնանորոգման կարիք ուներ եւ այդ բարի առաքելությունն ստանձնեցին արմատներով փոքրպամաճցի Անդրանիկ եւ Խաչատուր Բաբոյանները եւ Ռուբեն Սահակյանը:

Եկեղեցու վերաօծման սրբազան արարողության ավարտին անմիջապես հաջորդեց Սուրբ Պատարագի մատուցումը: Հավարտ Սուրբ Պատարագի թեմական առաջնորդը շնորհավորեց ազգաբնակչությանը, խոսեց եկեղեցու ինչպես հոգեւոր, այնպես էլ ազգային դերակատարության կարեւորության մասին եւ բարձր գնահատելով երիտասարդ բարերարների նվիրական աշխատանքը, նրանց փոխանցեց հուշանվերներ եւ Օրհնության գիր:

Հոգեւոր հովվության նվիրական ծառայության համար Սրբազան Հայրը գովաբանեց նաեւ Տեր Մովսես քահանայի ծառայությունը եւ իբրեւ գնահատանք նվիրեց մանրանկարչության գեղեցիկ պատկեր:

Միջոցառման ավարտին տեղի ունեցավ մատաղի օրհնություն եւ համընդհանուր տոնախմբություն:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մեծ հանդիսավորությամբ նշվեց Սբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում, ձեւավորված ավանդույթի համաձայն, տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը կատարեց Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի 29 սաների, ինչպես նաեւ Արարատյան հայրապետական թեմի եւ Արագածոտնի թեմի երկու սպասավորների սարկավագական ձեռնադրությունը:

Ձեռնադրությունից հետո խոսած իր քարոզում ձեռնադրող Սրբազան Հայրը տոնի առթիվ շնորհավորեց նորընծաներին եւ Մայր Աթոռի սարկավագաց ողջ դասին: Ապա

անդրադառնալով ձեռնադրությանը՝ Մուշեղ Սրբազանը նշեց. «...Այսօր 31 ճեմարանավարտ դպիրներ իրենց ծունկերը իջեցրեցին Իջման Ս. Սեղանի առաջ եւ ծնրադիր առաջնորդվեցին Ս. Խորան, որպեսզի, Տիրոջ խոսքի համեմատ, սպասավորները լինեն այդ Սուրբ Եկեղեցու, քարոզեն Ատծո խոսքն ու սպասավորեն Ս. Սեղանին: Այս պահին ամենքս աղոթք բարձրացնենք առ Աստված եւ խնդրենք, որ այն շնորհները, որ հեղվեցին 31 սարկավագների վրա, ուղեկից լինեն նրանց կյանքի օրերին, եւ կամքն Ատուծո՝ նրանք մեկ օր էլ արժանի լինեն քահանայության շնորհին, որպեսզի Ս. Սեղանին սպասավորելով ի վիճակի լինեն Տիրոջ մարմինն ու արյունը փոխակերպել Տիրոջ օրհնությամբ եւ բաշխել նրանց համար աղոթք բարձրացրած հավատացյալներին»: Սրբազան հայրը նաեւ հորդորեց նորընծա սարկավագներին, հոգեւոր կյանքում Ս. Ստեփանոսի օրինակն ունենալով, ամբողջովին նվիրվել Առաքելական Եկեղեցու ու նրա հավատավոր ժողովրդի սպասավորությանը:

Տոնի առիթով Մայր Աթոռի բոլոր սարկավագներին հայրապետական իր օրհնությունն ու հայրական պատգամը բաշխեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորելով սարկավագներին Ս. Ստեփանոսի տոնի առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Ս. Ստեփանոսի կերպարին՝ նշելով, որ անմնացորդ ծառայանվիրումի լավագույն օրինակն է այսօր ներկայանում հոգեւոր սպասավորներին հանձին Ստեփանոս Նախավկայի, որ իր կյանքն ընծայաբերեց եւ արիաբար հանդես եկավ Քրիստոսի Ավետարանի, վարդապետության պաշտպանությամբ, իր խոսքով վկայեց Քրիստոսի կյանքի ճշմարտությունը եւ չդարակուսեց զոհաբերել իր կյանքը:

«Այդպիսի անձերն են, որ կերտում են փառքը Քրիստոսի Եկեղեցու՝ նաեւ արժանանալով Տիրոջ ողորմությանը... Մենք կարող ենք մարտիրոսության պսակը կրել մեր աշխատանքով ու նվիրումով, մեր ջանասեր եւ նախանձախնդիր գործունեությամբ, մեր վարքով ու բարքով. Եկեղեցին այդպիսի նվիրյալների պետք ունի», ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով երիտասարդներին, որ Նախասարկավագի օրինակը ներշնչող լինի նրանց հոգեւոր առաքելության ճանապարհին եւ մշտապես արժանավոր անձեր լինեն Եկեղեցու անդաստանի մեջ՝ գնահատված, սիրված ու մեծարված ժողովրդի կողմից: Վերստին իր օրհնությունը տալով Մայր Աթոռի սարկավագաց դասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը զոհունակություն հայտնեց, որ Մայր Աթոռի սարկավագներն իրենց ազնիվ պահվածքով, ինչպես նաեւ գիտելիքներով ու ծառայությամբ իրապես փառավորում են Հայոց Եկեղեցու անունը եւ հավելում են ժողովրդի հարգանքն ու սերը դեպի Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ունի 136 սարկավագներ, որոնցից 86-ը՝ միաբանության շարքերում, իսկ 50-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մի պահ սարկավագական ձեռնադրության

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սիրված եւ բարի ավանդություն դարձած արարողություններից մեկը տարեմուտի հանդիսությունն է: Այդ հանդիսության ժամանակ մայրավանքի միաբանությունը հնարավորություն է ստանում մեկ տանիքի տակ ջերմ եւ ընտանեկան մթնոլորտում խորհելու անցնող տարվա դեպքերի մասին, բարեմաղթանքներ ուղղելու ամենքին եւ տրամադրվել Նոր տարվա գալստյանը: 2011 թվականի տարեմուտի հանդիսությունը անցկացվեց դեկտեմբեր 31-ի երեկոյան, մայրավանքի նոր սեղանատանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հանդիսությունը մեկնարկեց Տերունական աղոթքով, որից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ եւ շնորհունակ Հռիփսիմե Ստեփանյանի նվագակցությամբ կատարեց ՀՀ եւ ԳՀՃ օրհներգները:

Հանդիսության բացման խոսքն ասելու հրավիրվեց ճեմարանի տեսուչ՝ գերաշնորհ Տ. Գեւորգ եպս. Սարոյանը:

Սրբազան հայրը ողջունեց ներկաներին եւ նշեց, որ մոտենում է քրիստոնյաների համար ամենասիրելի եւ խորհրդավոր պահերից մեկը՝ հին տարվա վախճանն ու նոր տարվա մեկնարկը: Սրբազանը, մեջբերելով Ս. Բարսեղ Կեսարացու այն խոսքը, որ քրիստոնյայի համար ամենամեծ առաքելությունը ժամանակավորի մեջ հավիտենականը ստեղծելն է, շեշտեց, որ մեր եկեղեցին դարեր շարունակ առաջ է ընթացել այդ կարգախոսով: Դիմելով ներկաներին՝ սրբազանը նշեց, որ գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին, բոլորի առաքելությունն է հնարավորությունների ներածի չափով մասնակցել Հայրենիքի եւ Եկեղեցու շենացմանը:

Հավարտ իր խոսքի՝ սրբազան հայրը Մայր Աթոռի միաբանության եւ պաշտոնեության անունից բաժակ բարձրացրեց Վեհափառ Հայրապետի կենաց արեւշատության համար եւ մաղթեց, որ Նոր տարում իրականանան Նորին Սրբության բոլոր սպասումները:

Սրբազան հոր խոսքից հետո ճեմարանի երգչախումբը քահանայից լսարանի սան Հովհաննես Կրապետյանի նվագակցությամբ (թավջութակ) կատարեց Ֆ. Գրուբերի «Լուռ գիշեր» ստեղծագործությունը: Դրան հաջորդեց Ռ. Հախվերդյանի «Զյուն» ստեղծագործությունը, որը կատարեցին քահանայից լսարանի շնորհալի սաներ Հովհաննես Կարապետյանը (թավջութակ), Կարեն Հերոյանը (կիթառ, վոկալ) եւ Վահրամ Քարտաշյանը (ուդու):

Միաբանության անունից խոսք ասաց հոգեշնորհ Տ. Ահարոն աբդ. Ծախվերդյանը:

Երգչախմբի երգացանկի հաջորդ համարն էր ժողովրդական երգ «Ղափամա»-ն, որին նվագակցում էին քահանայից լսարանի սաներ Կարեն Հովսեփյանը (շվի) եւ Արմեն Բաղդասարյանը (դհոլ):

Ասմունքի շնորհին ունակ ճեմարանականներից Դ. լսարանի սան Դավիթ ուրկ. Հովհաննիսյանը ներկաներին մատուցեց Մ. Մեծարենցի «Նոր տարին» բանաստեղծությունը: Քահանայից լսարանի սաներ Հովհաննես Կարապետյանը (թավջութակ), Կարեն Հերոյանը (կիթառ), Վահրամ Քարտաշյանը (ուդու), Արմեն Բաղդասարյանը (դհոլ) եւ Կարեն Հովսեփյանը (շվի) կատարեցին Ա. Խաչատրյանի «Նմանակում ժողովրդականին» ստեղծագործությունը:

Ճեմարանի դասախոսության անունից Տիար Ավետիս Հարությունյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, ճեմարանի դասախոսական կազմին ցուցաբերած բարի վերաբերմունքի համար, ապա մաղթեց, որ Նոր տարին բոլորի համար լինի հաջողություններով լի:

Այնուհետեւ Ե. լսարանի սան Նորվան սրկ. Իսախանյանը ներկայացրեց Պ. Սեւակի «Դիմում եմ պահանջելու պես» ստեղծագործությունը:

Ճեմարանի երգչախմբի կատարած հերթական համարը Ա. Գրաշիի եւ Ա. Բաբաջանյանի «Ազգ փառապանծ»-ն էր:

Քահանայից լսարանի սաներ Զավեն Հարությունյանը (վոկալ), Արմեն Բաղդասարյանը (դհոլ), Վահրամ Քարտաշյանը (թառ) եւ Կարեն Հերոյանը (կիթառ, վոկալ) ներկայացրին Գուսան Շահենի «Ջեփյուռ կդառնամ»-ը:

Բարեշնորհ Խաչատուր սրկ. Տյոմկինը ճեմարանականների անունից ողջունեց Հայրապետին եւ ներկա հանրությանը՝ շեշտելով, որ ներկա գտնվողները բացառիկ հաջողություն ունեցող մարդիկ են, քանի որ հնարավորություն ունեն Նոր տարին դիմավորելու մայրավանքի կամարների տակ: Խաչատուր սարկավագը նշեց, որ Նոր տարուց առաջ յուրաքանչյուրը ջանում է ազատվել նախորդ տարիների թերություններից եւ Նոր տարին դիմավորել նորովի կոփված: Սարկավագը շեշտեց նաեւ, որ նոր ժամանակները իրենց հետ բերում են նոր մարտահրավերներ, սակայն Քրիստոս նույն է երեկ, այսօր եւ հավիտյան, եւ ըստ այդմ էլ նույնն է քրիստոնեական հավատը բոլոր ժամանակների դիմաց ի մասնավորի ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցունը:

Քահանայից լսարանի սաների վերջին կատարումը եղավ Ա. Հեքիմյանի «Բարի արագիլ»-ը:

Հանդիսության վերջին ասմունքող ճեմարանականը՝ Դ. լսարանի Գագիկ ուրկ. Հովհաննիսյանը արտասանեց Զահրատի «Կաղանդի գիշեր»-ը:

Այս հատվածում մեկնարկեց մայրավանքի տարեմուտի հանդիսության ավանդական դարձած կաղանդչեքը, որի ժամանակ ճեմարանի ուսանողները համեստ կատակներով փորձում են զվարճացնել ներկաներին:

Վաստակաշատ Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ ճեմարանի երգչա-

խումբը կատարեց վերջին համարը՝ Ռ. Ամիրխանյանի «Նոր տարվա հանդես»-ը, որը ենթարկվել էր հումորային փոքրիկ ձեւափոխության՝ մտնելով հանդիսության տրամաբանական շրջանակների մեջ:

Տարեմուտի հանդեսի եզրափակող մասն էր մրցանակաբաշխությունը:

Հանդիսությունը պսակելու եւ ներկաներին օրհնելու խնդրանքով ճեմարանի տեսուչը դիմեց Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկաներին եւ իր խոսքը սկսեց գնահատանք մատուցելով անցնող տարում կատարված աշխատանքների համար, սակայն նշեց նաեւ, որ կատարվածի կողքին կան դեռ բազում չիրագործված գործեր, որոնք հարկ է իրականության կոչել գալիք տարում: Վեհափառը ներկաներին կոչ արեց ապագային նայել տեսիլքի միջոցով եւ ձգտել, որ այդ տեսիլքը ապագայում դառնա իրականություն, քանի որ երբ մարդ անհատը կամ մարդկանց խումբն ունենում է նպատակ՝ իր անցկացրած յուրաքանչյուր վայրկյան դառնում է իմաստավորված, իսկ մեկ տարի անց արդեն տեսանելի է դառնում, թե ինչ չափով է այդ տեսիլքը կոչվել իրականության: Վեհափառը նշեց նաեւ, որ Նոր տարին կրկնակի երջանկություն է, քանի որ նոր մեկնարկի բերկրանքին միանում է նաեւ Տիրոջ Ծննդյան ավետիսի օրհնանքը, որով մարդ ընկալում է, որ Նոր տարին անհրաժեշտ է սկսել Քրիստոսի սերը սրտում պահելով:

Իր Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետն օրհնեց ներկաներին եւ հրավիրեց Տիրոջ Իջման Սուրբ Սեղանի առջեւ Նոր տարվա առաջին աղոթքը մատուցելու Աստծուն:

ԴԱՎԻԹ ՍԱՐԳԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գեորգյան հոգեւոր ճեմարանի Ջ լսարան

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱ

Հունվարի 15-ին Կալկաթայի (Հնդկաստան) հայ համայնքը, Հայոց մարդասիրական ճեմարանի ուսուցիչները եւ մի խումբ ավագ աշակերտներ ուխտի գնացին 1695 թվականին կառուցված Չինսուրայի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

Սուրբ Հովհաննեսի մասունքը պահվում է Կալկաթայի Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցում եւ տարին մեկ անգամ տարվում է Չինսուրա:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը: Հընթացս Պատարագի Հայր Խորենը Սուրբ Հովհաննես Մկրտչի Ոսկե Աջով օրհնեց ուխտավորներին, ապա իր քարոզում անդրադարձավ Սրբի կարեւոր եւ նշանակալի դերին, որ նա ունի Ընդհանրական եկեղեցու համար:

Ուխտավորներն իրենց խոնարհումը բերեցին սրբազան մասունքին՝ առ Աստված աղոթելով եւ հայցելով Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությունը:

Արցախի վերջին մելիք Ֆրիդոն Բեգլարը (1795 մայիսի 1-սեպտեմբերի 22 1884) թաղված է եկեղեցու զանգակատան հովանու ներքո: Երբեմնի հայաշատ Չինսուրայում այսօր ոչ մի հայ չի ապրում, այդուհանդերձ եկեղեցին գտնվում է բարվոք վիճակում: Եկեղեցու ամենօրյա պահպանությունը եւ խնամքը հոգում է Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչությունը:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով հունվարի 5-ի երեկոյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն իր քարոզում անդրադարձավ Քրիստոսի Ս. Ծննդյան խորհրդին. «Այսօր մենք նշում ենք մի ծնունդ, որը գալիս է պարգեւաբաշխելու եւ լույս սփռելու մարդկային բոլոր ծնունդների խորհուրդների վրա: Քրիստոսի ծննդի լույսի ներքո մեզ համար ընկալելի է մարդկային ծննդյան եւ մահվան խորհուրդը: Առանց Քրիստոսի ծննդյան սրբազան խորհրդի մենք չենք կարող հասկանալ՝ որտեղից եկանք, ինչու ծնվեցինք եւ ինչու ենք մահանում մեր երկրավոր կյանքն ավարտելուց

հետո: Ահա Քրիստոս իր հրաշափառ Ծննդյամբ գալիս է իմաստ ու բովանդակություն հաղորդելու մարդկային կյանքին:

Հաճախ կյանքը մեզ համար անիմաստ ու աննպատակ է թվում. զրկանքներով, տառապանքներով ու դժվարություններով լեցուն. կյանքը, կարծես, ներկայանում է մեզ տառապանքի մի հովիտ, մի վայր, ուր մենք ամենքս եկել ենք զրկանքներ, կորուստներ ու անհարմարություններ կրելու: Սակայն Քրիստոսի ծնունդը գալիս է հաստատելու եւ վճռականորեն արձանագրելու, որ կյանքն ունի իր բովանդակությունն ու իմաստը»:

Պատարագի ավարտին կատարվեց նախատոնակ, որից հետո Ամենայն Հայոց Հայրապետը Տիրոջ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության ավետիսը, ապա եւ Միածնաէջ Տաճարի Ս. Սեղանի լույսը փոխանցեց Մայր Աթոռի միաբանությանը եւ ներկա հազարավոր հայորդիներին:

Մինչեւ ուշ գիշեր բարեպաշտ ժողովուրդն այցելում էր տոնական լույսերով ողողված համայն հայության հոգեւոր կենտրոնը եւ Մայր Տաճարի կանթեղներից իրենց օջախները տանում մեր Տիրոջ Ս. Ծննդյան ավետարեր եւ կենդանարար լույսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՒ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԺՆԵՒԻ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 6-ին աշխարհասփյուռ հայությունը տոնախմբեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության հրաշափառ տոնը: Նախորդ օրը հունվարի 5-ին Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցում մատուցվեց ճրագալույցի Սուրբ Պատարագ մասնակցությամբ բարեպաշտ հայորդիների: Պատարագիչն էր Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, որն իր անդրանիկ Պատարագն էր մատուցում Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցում: Հայր Սուրբը հավատացյալներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքները եւ պատգամը՝ ավետելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը եւ Աստվածհայտնությունը: Սուրբ Հակոբ եկեղեցին ողողված էր մոմերի լույսերով, որ հավատացյալները տարան իրենց հետ՝ լուսավորելու սեփական հարկերը Տիրոջ Սուրբ Ծննդյան կենարար լույսով:

Հունվարի 6-ին մեծ էր տոնական խանդավառությունը Սուրբ Հակոբ եկեղեցում: Պատարագիչը կրկին առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանն էր: «Հայր Մեր»-ից առաջ Հայր Սուրբը ներկա հավատացյալներին ուղղեց իր պատգամը Սրբազան տոնի առիթով եւ ավետեց Խաղաղության Իշխանի ծնունդը: Տեղապահ Հայր Սուրբը հորդորեց հավատացյալներին իրենց հոգիներից ներս փառաբանակից լինել ավետարբեր հրեշտակներին. «Փառք Աստծուն բարձունքներում,

խաղաղություն երկրի վրա եւ հաճություն մարդկանց մեջն: Նա անդրադարձ ունեցավ, որ խաղաղությունը բնավ հեռավոր անցյալի արձագանք չէ, եւ ոչ էլ մարդկային ուտոպիա: Հայր Սուրբը նշեց, որ համընդհանուր խաղաղությունը, որ սկսվում է անհատի ներքին հոգեւոր խաղաղությունից, կարող է իրականություն դառնալ այն ժամանակ միայն, երբ հեւտեւելով առաքելական պատգամին չենք մտահոգվում եւ չենք վախենում աշխարհային որեւէ իրականությունից, աղոթում եւ գոհություն ենք մատուցում Աստծուն կյանքի բոլոր հանգամանքներում, խորհում ենք ճշմարիտը, ազնիվը, առաքինին եւ սուրբը եւ մեր կյանքերից ներս կիրառում ենք այն, ինչ ուսանում, ընդունում եւ տեսանում ենք Աստվածաշունչ Սուրբ Գրքում: Այդժամ «Աստծու խաղաղութիւնը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով» (Փիլիպ. Դ. 7) :

Հավարտ Սուրբ Պատարագի Հոգեշնորհ Հայր Սուրբը կատարեց ջրօրհնեքի արարողություն՝ որպես Քրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Հատուկ աղոթքներով եւ շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվեց Ավետարանով, Սուրբ Խաչով եւ Սրբալույս Մյուռոնով: Օրհնված ջուրը վերջում բաժանվեց ներկա հավատացյալ հայորդիներին:

ԾՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

ՍՈՒԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՒ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Նորամուտ տարվա հոգեւոր եւ ազգային տոների առաջնեկ Սուրբ Ծննդի եւ Աստվածհայտնության տոնակատարությունը վիրահայոց թեմում մեկնարկեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, թեմի հոգեւոր առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի մատուցած ճրագալույցի Սուրբ Պատարագով, որին ներկա էին տեղի հայ համայնքի ղեկավար այրերը, մտավորականության ներկայացուցիչներ, պետական եւ հասարակական գործիչներ, հավատացյալներ: Վիրահայոց հոգեւոր թեմի առաջնորդը Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով:

Հունվարի 6-ի առավոտյան Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու Սուրբ Պատարագին ներկա գտնվելու եւ Թբիլիսիի հայ ազգաբնակչությանը շնորհավորելու էին եկել Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Գիգի Ծերեթելին, Թբիլիսիի Սակրեբուլոյի նախագահ Զաալ Սամադաշվիլին, Անվտանգության խորհրդի փոխքարտուղար Թամար Կինծուրաշվիլին:

Հավատացյալներին ուղղված իր խոսքում Սրբազան Հայրը շնորհավորանքի եւ երախտիքի խոսք ուղղեց նաեւ վրաց պաշտոնական անձանց՝ այդ օրը Հայ Առաքելա-

Զրօրհնեք

կան Եկեղեցի այցելելու եւ քրիստոնեական տոները հայերի հետ նշելու կապակցությամբ:

Թբիլիսիի եւ ողջ Վրաստանի հայ ազգաբնակչությանը եկեղեցական հոգեթով տոների առթիվ շնորհավորեցին վրացի բարձրաստիճան հյուրերը, որոնք գնահատելով թբիլիսահայության ներդրումն այս քաղաքի եւ այս երկրի բարգավաճման գործում, բարեմաղթանքի խոսքեր ուղղեցին համայն հայությանը Ամանորի եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնակատարություններ եղան Սամցխե-Ջավախքի հայոց եկեղեցիներում, գլխավորությամբ առաջնորդական ընդհանուր փոխանորդ Բաբգեն Սալբիյանի: Տոները նշվեցին նաեւ Բաթումիի եւ Քվեմո-Քարթլիի հայ համայնքներում:

Քրիստոսի Սուրբ Ծննդով եւ հրաշափառ Հայտնության հոգեպարար հույզերով եւ մեծ սիրով տոգորված հայ հավատացյալները մոմերով եւ օրհնված ջրով վերադարձան իրենց տները:

ՀԱՅԱՐՏՈՒՆ, ԹԲԻԼԻՍԻ

Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՒ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնը:

Հունվարի 6-ին՝ Ժամը 10^{30}-ին, խաչերով ու խաչվառներով պսակյալ հայրապետական թափորը շարժվեց Վեհարանից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ամպհովանիով առաջնորդելով Մայր Տաճար, ուր տոնի առիթով մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Ամպհովանակիրներն էին՝ գեներալ-մայոր Տիգրան Գասպարյանը, գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանը, գեներալ-մայոր Կամո Քոչունցը եւ գեներալ-մայոր Ալբերտ Մարդոյանը: Սրբազան արարողության ժամանակ Նորին Սրբությանը որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը եւ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Պատարագի Սրբազան արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց համայն հայությանը Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով՝ վերստին փոխանցելով ամենքին հրեշտակաբարբառ ավետիսը:

Հոգենորոգ տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույնները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփյուռս աշխարհի համայն հայ

ժողովրդին: Ս. Ծննդյան ավետիսով Նորին Սրբությունը ողջունեց նաեւ Պատարագի սրբազան արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին, հայոց պետական ավագանուն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, Քույր եկեղեցիների հոգեւոր պետերին:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետն ի հիշատակ Քրիստոսի Սուրբ Մկրտության կատարեց Ջրօրհնեքի արարողությունը, որի ընթացքում աղոթքների ու շարականների ուղեկցությամբ Ս. Խաչով օրհնվեց ջուրը եւ սրբագործվեց սրբալույս Մյուռոնով:

Այս տարի Մայր Տաճարում ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ տիար Գաբրիել Ջամբարջին:

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Սամվել Նիկոյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, կրթության, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչներ:

Տոնական Ս. Պատարագից հետո Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձատան սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որտեղ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին ներկաներին ողջունեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության ավետիսով՝ ասելով՝ Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՓԼՈՒԶՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով, որի ընթացքում քննության առնվեց Թբիլիսիի Սուրբ Նշան հայկական եկեղեցու փլուզման խնդիրը: Ժողովում Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդունեց հետեւյալ հայտարարությունը.

«Ցավով տեղեկացանք, որ հունվարի 9-ին փլուզվել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գտնվող Ս. Նշան հայկական եկեղեցու հյուսիսարեւելյան հատվածը:

Մեծապես անհանգստացած սույն փաստով եւ նկատի ունենալով Շամխորեցոց

Կարմիր Ավետարան եւ Մուղնեցոց Սուրբ Գեւորգ հայկական եկեղեցիների փլուզման նախադեպերը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն արտահայտում է իր խորը մտահոգությունը:

Դեռեւս 2011թ. հունիս ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարած հովվապետական այցի ընթացքում Վրաստանի Հանրապետության նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի եւ Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ-ի հետ տեղի ունեցած հանդիպմանը հայկական կողմին հավաստիացում էր արվել, որ փլուզված եւ փլուզման վտանգի ենթակա հայկական եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք եւ հոգատարություն կդրսեւորվի:

Հակառակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վիրահայոց թեմի կողմից հնչեցված ահազանգերի՝ վրացական կողմի անուշադրությունը եւ հապաղումը հրատապ խնդիրների լուծման մեջ, ցավոք, այսօր կանգնեցրել է մեզ տխուր այս իրավիճակի առջեւ:

Գերագույն հոգեւոր խորհուրդը կոչ է ուղղում Վրաստանի իշխանություններին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել փրկելու կործանումից Ս. Նշան հայկական եկեղեցին, հետամուտ լինել Վրաստանի մշակութային ժառանգության մաս կազմող հայկական սրբավայրերի պահպանությանն ու խնամքին եւ ընդառաջ Վիրահայոց թեմի խնդրանքին՝ վիրահայությանը վերադարձնել պահանջված հայկական եկեղեցիները»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱԹՈԼԻԿ ԵՒ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունվարի 16-ից 23-ը Ադիս Աբեբայում (Եթովպիա) տեղի ունեցավ Կաթոլիկ և Արևելյան Ուղղափառ եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային միացյալ հանձնախմբի հերթական հանդիպումը «Հաղորդություն և հաղորդակցություն» թեմայով:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին եկեղեցիների միջև հաղորդությանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև հովվական հարցեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեց և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց Դամասկոսի թեմի առաջնորդ Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունվարի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալական նամակ է հղել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին՝ Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատի կողմից ցեղասպանությունների ժխտումը քրեականացնելու մասին օրինագծի ընդունման կապակցությամբ:

Գրության մեջ մասնավորապես ասված է. «Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ, Ֆրանսիայի պետական այրերին և ֆրանսիացի եղբայր ժողովրդին՝ արտահայտելով մեր Սուրբ Եկեղեցու և աշխարհասփյուռ մեր զավակների երախտագիտությունը Ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրենքը Սենատում ընդունելու համար:

Ուրախ է հայությունն ի սփյուռս աշխարհի: Ֆրանսիայի Սենատից վերստին հնչեց արդարության ձայնը, որի հաղթանակին աշխարհասփյուռ մեր ժողովուրդը սպասում է մեկ հարյուրամյակ: Այսօր հայ և ֆրանսիացի ժողովուրդների ջերմ բարեկամությունը զարդարվում է մարդու և ազգերի իրավունքների պաշտպանության նոր ձեռքբերումով, որը հայ նահատակների լույս հիշատակի առջև սփոփանք է բերում մեր ժողովրդին և ամրապնդում հավատը Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման:

Ընդունված օրենքը վկայում է Ձեր, Ֆրանսիայի պետության և ժողովրդի անխախտ նախանձախնդրությունը ժողովրդավարական սկզբունքների, համամարդկային արժեքների հանդեպ, որոնց ամրագրումը կբացառի աշխարհում բռնություններն ու մարդկության դեմ գործվող ողբերգական ոճիրները»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունվարի 24-25-ը Ժնևի Էկումենիկ կենտրոնում տեղի ունեցավ Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի Կենտրոնական կոմիտեի հանդիպումը, որի ընթացքում կոնֆերանսի մասնակիցներն անդրադարձան նոր գլխավոր քարտուղարի ընտրության, 2013-ին կայանալիք Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարին, Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի վերակազմավորման հանձնախմբի զեկույցին:

Ժողովականները Բելգիայի Միացյալ Բողոքական եկեղեցիների նախագահ վերա-

պատվելի դոկտոր Գի Լիագղային ընտրեցին որպես ԵԵԿ գլխավոր քարտուղար, իրենց դիտարկումները փոխանցեցին 14-րդ համագումարը նախապատրաստող հանձնախմբին, ինչպես նաև քննարկեցին ԵԵԿ վերակառուցման հանձնախմբի ներկայացրած խորհրդակցական փաստաթուղթը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեց Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի Կենտրոնական կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Սրբազան Հայրը և Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը մի շարք հանդիպումներ ունեցան Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների ներկայացուցչների հետ՝ քննարկելով համագործակցության և երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 20-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հայոց բանակի 20-ամյա հոբելյանի առիթով: Ուղերձում մասնավորապես ասված է.

«Հայոց փառապանծ բանակի 20-ամյա հոբելյանի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հոգու խնդությամբ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորանքները՝ քաջարի մեր զինվորներին ու զորավարներին և համայն մեր ժողովրդին:

Մեր անկախ պետության սիրասուն զավակն է Հայոց բանակը, որ ծնունդ առավ Հայրենիքի պաշտպանության մարտերում, զրկանքների ու զոհողությունների մեջ և աճեց ու ամրապնդվեց դյուցազն Սասունցի Դավթի նման օր օրի և ժամ առ ժամ: Հայոց բանակը մարմնավորում է մեր ժողովրդի հայրենասեր հոգին, ազգային մեր իրավունքները պաշտպանելու կամքը, ապագայի վստահությունը և պատվարն ու ապավենն է հայրենի մեր երկրի խաղաղ կյանքի ու առաջընթացի:

Փառք և գոհություն Աստծուն, որ մեր բանակը իր հոբելյանը դիմավորում է ձեռքբերումներով ու հաղթանակներով, մարտունակ ու արի ոգով, նաև՝ ամուր հեղինակությամբ, որ ունի մեր ժողովրդի հոգում: Մեր բարձր գնահատանքն ենք բերում Հայոց բանակի կազմավորման և զորացման, նրա քաջազուն ոգու կերտման գործում ավանդ ու երախտիք ունեցող մեր սիրելի զավակներին, Հայրենիքի սահմանները այսօր պաշտպանող մեր զորաց և

զորականաց, ովքեր իրենց ազնվասիրտ ծառայությամբ շարունակում են պանծալի ճանապարհը Հայոց բանակի:

Աղոթում ենք, որ Աստված Իր հանապազ օրհնության ներքո պահպանի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աշխարհի և արգասավորի մեր ջանքերը ի սեր մեր երկրի, մեր լուսավոր գալիքի հույսերի: Թող Տերը երկնային խաղաղության մեջ հանգիստ պարգևի մարտերում մարտիրոսացած մեր զավակներին և Իր ամենառատ շնորհներով քաջառողջ պահի մեր բանակի զորավարներին ու մարտիկներին՝ արի ոգով և հաղթական բազուկով: Թող մեր կյանքում միշտ շողա Հայրենիքին ծառայության պատիվն ու պարծանքը»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԱՐԺԱՆԱՑՐԵՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հունվարի 29-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ Հայոց բանակի 20-ամյա հոբելյանի առիթով:

Սուրբ Պատարագի արարողությունից հետո եկեղեցականների թափորը Վեհափառ Հայրապետին և ՀՀ Պաշտպանության նախարարին առաջնորդեց Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճ, ուր տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

Ընդունելությանը Հայոց բանակի բարձրաստիճան սպայական կազմին իր հայրապետական օրհնությունն ու շնորհավորանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայցում ենք, որ Տերն օգնական լինի ձեզ, զորացնի ծառայության մեջ, որպեսզի միշտ բարձր պահեք Հայոց բանակի անունը և առաջնորդեք նորանոր հաղթանակների: Թող այսօր Հայոց բանակի պահապան հռչակված Ս. Խաչի օրհնությունը տարածվի յուրաքանչյուր զինվորի ու հրամանատարի վրա, զորացնի, արիացնի և պահապան լինի նրանց՝ դարձնելով անխոցելի», - մաղթեց Նորին Սրբությունը:

Այնուհետև, միջնորդությամբ ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայոց բանակի 20-րդ տարեդարձի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան հանձնեց գեներալ-մայոր Տիգրան Գասպարյանին, գեներալ-մայոր Լյովա Մնացականյանին, գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանին, գեներալ-լեյտենանտ Հայկազ Բաղմանյանին, գնդապետ Սուրեն Հարությունյանին և ՊՆ իրա-

Աշոտ Երկաթի խաչի օծումը

վաբանական վարչության պետ Սեդրակ Սեդրակյանին:

Տոնի առիթով ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը «ՀՀ Զինված Ուժեր. 20 Տարի» հոբելյանական մեդալ հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ինչպես նաև Հայաստանի Աստվածաշնչային ընկերության տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանին, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին և ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին:

Ապա ընդունելության համար Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց և տոնի առիթով շնորհավորեց ՀՀ Պաշտպանության նախարարը: Պրն. Օհանյանը բարձր գնահատեց հոգևոր սպասավորության դերը հայ ժողովրդի գոյության պահպանման գործում: «Խորհրդանշող պահ ապրեցինք՝ սրանալով Խաչը որպես ուղղորդող Զինված ուժերի և անձնակազմի համար», - ասաց պրն. Օհանյանը: Անդրադառնալով Աշոտ Բ. Երկաթ թագավորի կերպարին և գործունեությանը՝ նա կոչ արեց նմանվել նախնիներին, ովքեր իրենց հմուտ քաղաքականության շնորհիվ խոշոր հաղթանակներ են ապահովել հայ ժողովրդին: ՀՀ Պաշտպանության նախարարը տեղեկացրեց, որ Տիրոջ խաչափայտի մասունքը կրող նորաոծ Ս. Խաչը կանցկացվի բոլոր զորամասերով և ՀՀ սահմաններով, որպեսզի հայ զինվորը հնարավորություն ունենա հաղորդ դառնալու Ս. Նշանի օրհնաբեր զորությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՈՎ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ՊԱՀԱՊԱՆ ՀՌՉԱԿՎԵՑ ԱՇՈՏ ԵՐԿԱԹ ԹԱԳԱՎՈՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԸ

Հունվարի 29-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ Հայոց բանակի 20-րդ տարեդարձի առիթով: Պատարագիչն էր ՀՀ Զինված Ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը, Հայոց բանակի բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ և հյուրեր:

Սուրբ Պատարագի ընթացքում հրապարակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ կոնդակը Հայոց բանակի 20-ամյա հոբելյանի առիթով:

Հայրապետական կոնդակով Հայոց բանակին պահապան հռչակվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պահվող հայոց Աշոտ Բ. Երկաթ թագավորի Սուրբ Խաչը, որի մեջ ամփոփված է Տիրոջ կենարար խաչափայտի մասունքը: Այս առիթով Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ պատրաստվել էր պատմական Ս. Խաչի կրկնօրինակը, որի կենտրոնում ևս զետեղվել է Տիրոջ խաչափայտի մասունքի սուրբ նշխար:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ պահապան Ս. Խաչի կրկնօրինակի օրհնության արարողությունը: Սաղմոսների, շարականների երգեցողության ներքո Մայր Տաճարի մկրտության ավազանից Ս. Սեղան բարձրացվեց Սրբալույս Մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց խաչի չորս թևերը:

Արարողությունից հետո Նորին Սրբությունը մաղթեց, որ խաչը զորություն հաղթության լինի թշնամիների դեմ և վահան ամրության՝ Հայոց բանակի զինվորների ու հրամանատարների համար, որպեսզի անվրդով ու ապահով պահեն Հայրենիքի սահմանները, ժողովրդի բարօր ու խաղաղ կյանքը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նորաօծ խաչը փոխանցեց ՀՀ Պաշտպանության նախարարությանն ու ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Հունվարի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ֆրանսիա և Անգլիա, ուր հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների, ինչպես նաև թեմական վարչությունների հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Կաթողիկոսական գրասենյակի գործավար քարտուղար Տ. Ադամ քահանա Մակարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ Մայր Աթոռի կառույցներում եւ թեմերում:

Մայր Աթոռի միաբան Տ. Կորյուն աբեղա Առաքելյանը ծառայության է կոչվել Արմավիրի թեմում: Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը, ազատվելով Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսչի պարտականություններից, ծառայության է անցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Տ. Նշան աբեղա Հմայակյանը, ազատվելով Սեւանի Վազգենյան դպրանոցում սպանձնած պարտականություններից, իր ծառայությունը կշարունակի Հառիճավանքի ընծայարանում:

2011թ. դեկտեմբերին ձեռնադրված հոգեւորականներից Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված ուժերում, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում՝ որպես Ծիսական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու: Տ. Ահարոն աբեղա Շահվերդյանը նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ: Տ. Հուսիկ քահանա Սարգսյանը կշարունակի իր ծառայությունը Մայր Աթոռի դիվանապանը, իսկ Տ. Ենովք քահանա Եսայանը՝ Հայոց բանակում:

2012 թ. Հունվարի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են նշանակումներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում:

Մայր Աթոռի միաբան Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում: Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, ավարտելով ծառայությունը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում՝ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի Հայորդյաց տան հոգևոր հովիվ: Տ. Զոհրապ քահանա Մազմանյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված ուժերում, իր հոգևոր սպասավորությունը կշարունակի Վիրահայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ ԵՒ ՍՐԲՈՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Ստորև ներկայացվում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու 2012 թ. եկեղեցական տոների եւ սրբոց հիշատակության օրերի ամփոփ ցանկը:

Ս. ԾՆՆԴԴ	Յուն.	6
Անուանակոչութիւն	Յուն.	13
Օնուրդ Ս. Յովհաննու Կարապետին	Յուն.	14
Բարեկենդան Առաջաւորաց	Յուն.	29
Ս. Սարգիս	Փետր.	4
ՏԵԼԻՈՒԸՆԴՈՒՆԷ	Փետր.	14
Ցօն Ս. Վարդանանց	Փետր.	18
Բուն Բարեկենդան	Փետր.	19
Ս. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի վիրապն	Մարտ	24
Ծաղկազարդ	Ապրիլ	1
Աւետում	Ապրիլ	7
Ս. ՀԱՅՏԻՆ	Ապրիլ	8
Երեւումն Ս. Խաչի	Մայիս	6
Համբարձում	Մայիս	17
Հոգեգալուստ	Մայիս	27
Բարեկենդան Եղիսաբեթ աստուծոյ	Մայիս	27
Ս. Հռիփսիմեանց	Յունիս	4
Ս. Գայիանեանց	Յունիս	5
Ս. Յովհ. Կարապետին ... (Ս. Շողակաթ)	Յունիս	7
Ս. Գրիգոր Լուսաւորչի ելն ի վիրապէն	Յունիս	9
Ցօն Ս. Էջմիածնի	Յունիս	10
Բարեկ. Ս. Գրիգոր Լուսաւորչի աստուծոյ	Յունիս	17
Գիւտ նշխարաց Ս.Գրիգոր Լուսաւորչի	Յունիս	23
Ս. Սահակ, Ս. Մեսրովբ	Յունիս	28
Բարեկ. Վարդավառի	Յուլիս	8
ՊԱՅՇԱՆԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ	Յուլիս	15
Բարեկ. Ս. Աստուածածնի	Օգոստ.	5
Ցօն Շող. Ս. Էջմիածնի	Օգոստ.	11
ՍԵՐԿԵՎՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ	Օգոստ.	12
Օնուրդ Ս. Կուսին	Սեպտ.	8
Բարեկ. Ս. Խաչի	Սեպտ.	9
ԽԱՉՎԵՐԿՍՔ	Սեպտ.	16
Բարեկ. Վարագայ Ս. Խաչի	Սեպտ.	23
Ս. Գերոգ	Սեպտ.	29
Վարագայ Ս. Խաչ	Սեպտ.	30
Ցօն Ս. Թարգմանչացն	Հոկտ.	13
Գիւտ Ս. Խաչի	Հոկտ.	28
Ս. Հրեշտակապետացն	Նոյ.	10
Բարեկ. Յիսնակաց	Նոյ.	18
Ընծայումն Ս. Աստուածածնի	Նոյ.	21
Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս	Դեկտ.	1
Յղութիւն Ս. Աստուածածնի յԱնայր	Դեկտ.	9
Բարեկենդան Ս. Յակոբայ	Դեկտ.	9
Ս. Յակոբ	Դեկտ.	15
Ս. Դաւիթ Մարգարէ	Դեկտ.	24
Ս. Ստեփաննոս		

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ